

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՈՐՈՇ ԴԵՊՔԵՐ
ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ
(ԳԵՐԱՆԵՐԵՆԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ), ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՑՈՒՄ**

Փոփոխվող աշխարհաքաղաքական պայմանները թելադրում են հայեցակարգ առանց սահմանների եվրոպայի մասին, որտեղ զգալիորեն ընդլայնվում են ազգամիջյան համագործակցության ոլորտները: Եվրախորհրդի նախարարների կոմիտեի ամփոփիչ փաստաթղթում, որը կոչվում է «Ժամանակակից լեզուների իմացության համաեվրոպական համակարգ» (Common European Framework of Reference for Languages) ներկայացված են լեզուների ուսուցման նպատակները, խնդիրները, կրթության բովանդակությունը, ինչպես նաև նկարագրված են լեզուների տիրապետման վերջնական մակարդակները: Հիշատակված փաստաթղթում արդյունքները չափվում են տարբեր կարողությունների՝ իրազեկությունների (competences) միջոցով (sociolinguistic, pragmatic, linguistic): Հայաստանն ընդունում է Եվրախորհրդի լեզվական քաղաքականությունը, որի նպատակն է նպաստել զանազան լեզուների ուսումնասիրությանը, աջակցել բազմալեզվությանը, բարելավել հաղորդակցումը և փոխըմբռնումը անհատների միջև: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի առջև խնդիր է դրվում մշակել օտար լեզուների ուսուցման և ուսումնառության ավելի ինտենսիվ մեթոդներ և ռազմավարություններ: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է երկրորդ օտար լեզվի դասավանդումը: Անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի (գերմաներենի հիմքի վրա) քերականական երևույթների ուսուցման շատ հարցեր ենթակա են հետագա ուսումնասիրության և մշակման, քանի որ, ինչպես ցույց է տալիս դասավանդման պրակտիկան, չորրորդ ուսուցվող լեզվի՝ անգլերենի (հայերենից, ռուսերենից և գերմաներենից հետո) քերականական երևույթների դասավանդման մեթոդիկան բավականաչափ չի մշակված: Առանց համապատասխան քերականական հմտությունների անհնար է իրականացնել բանավոր և գրավոր հաղորդակցումը: Պետք է ապահովել ուսուցվող լեզվի նորմերը և զարգացնել հաղորդակցական կարողությունները: Ինչպես ցույց է տալիս դասավանդման փորձը, հաղորդակցական հմտությունները գտնվում են ոչ պատշաճ մակարդակի վրա, որի մասին վկայում են ուսանողների կատարած բազմաթիվ սխալները բանավոր և գրավոր խոսքում: Ուսանողների կատարած կայուն, տիպական սխալների հիմնական մասը պայմանավորված է հատկապես հայերենի, գերմաներենի և անգլերենի բացա-

սական ներթափանցման (ինտերֆերենցիա) երևույթով: Պետք է նշել, որ երկրորդ օտար լեզվի ուսուցման սկզբնական փուլում առավել ուժեղ է արտահայտվում առաջին օտար լեզվի /տվյալ դեպքում գերմաներենի/ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունը: Քերականական փոխներթափանցման դեպքերը քիչ են ուսումնասիրված: Քերականական փոխներթափանցումն առաջանում է հատկապես բանավոր հաղորդակցման ժամանակ: Քերականական փոխներթափանցման պատճառով կատարված սխալները վերացնելու համար դասավանդողն ինքը պետք է գիտակցի այն բոլոր օրինաչափությունները, որոնք հատուկ են ուսումնասիրված և ուսումնասիրվող լեզուներին:

Սույն հոդվածում մենք փորձել ենք քննարկել որոշ քերականական երևույթների բացասական ներթափանցման դեպքեր, որոնք ի հայտ են գալիս անգլերենը որպես երկրորդ օտար լեզու / գերմաներենի հիմքի վրա/ ուսուցանելիս:

Գերմաներենի քերականական համակարգի բացասական ներթափանցման տիպական օրինակներից է նախադասության շարադասությունը: Անգլերեն լեզվում նախադասության շարադասությունը (Word Order) կայուն է:

6. Ժամանակի պարագա	1. Ենթակա	2. Ստորոգյալ	3. Խնդիր	4. Չնկ պարագա	5. Տեղի պարագա	6. Ժամանակի պարագա
--------------------------	--------------	-----------------	-------------	------------------	-------------------	--------------------------

Առաջին տեղում ենթակայի խումբն է, երկրորդ տեղում՝ ստորոգյալի: Ենթական և ստորոգյալը փոխկապակցված են և փոխալայմանավորված:

Գերմաներեն լեզվում նույնպես նախադասության շարադասությունը / die Wortfolge/ կայուն է: Գերմաներենի՝ պարզ նախադասության համար տիպական է շրջանակային կառույցը / die Rahmenkonstruktion/:

1. Ենթակա	2. Ստորոգյալ / խոնարհվող մաս/	3. Ստորոգյալի խմբի լրացումներ	4. Ստորոգյալ / չխոնարհվող մաս/
--------------	----------------------------------	----------------------------------	-----------------------------------

Նախադասության գլխավոր անդամների տեղը կայուն է, իսկ երկրորդական անդամների տեղը հարաբերականորեն ազատ է: Ենթական և ստորոգյալի խոնարհվող մասը սովորաբար դրվում են կողք-կողքի, իսկ ստորոգյալի չխոնարհվող մասը դրվում է նախադասության վերջում, կազմելով շրջանակային կառույց: Ստորոգյալի երկու մասերի միջև տեղադրվում են ստորոգյալի լրացումները, իսկ երբեմն նաև ենթական: Լրացումների տեղի որոշումը կախված է նրանց իմաստից:

Հայերենում նախադասության շարադասությունը շրջուն է:

Գերմաներենի բացասական ազդեցության տակ ուսանողները սովորաբար թույլ են տալիս հետևյալ շարադասական սխալը. Yesterday I was at the theater—ի փոխարեն ուսանողները հաճախ գործածում են *Yesterday *was I* at the theater (գերմ. *Gestern war ich im Theater*): I shall go to the cinema-ի փոխարեն հաճախ գործածվում է *I shall to the cinema go (գերմ. *Ich werde ins Kino gehen*):

Շարադասական սխալներից է նաև գերմաներենի երկրորդական նախադասության ստորոգյալի տեղի պահպանումը անգլերեն նախադասության մեջ, այսինքն՝ ստորոգյալի տեղափոխումը նախադասության վերջ: Օրինակ՝ He said that the novel was very interesting նախադասության մեջ ուսանողները հաճախ կատարում են հետևյալ տիպական սխալը. *He said the novel very interesting is (գերմ. *Er sagte, dass der Roman interesant sci/ ist*):

Քերականական մակարդակում բացասական փոխներթափանցման ցայտուն օրինակ է գերմաներենի Perfekt-ի և Plusquamperfekt-ի բացասական ազդեցության տակ անգլերենի Present Perfect-ի և Past Perfect-ի գործածումը Past Indefinite-ի փոխարեն: Անգլերենի Past Indefinite-ին գերմաներենում համապատասխանում են Imperfekt-ը, Perfekt-ը և Plusquamperfekt-ը:



Ուսանողները կայուն, տիպական սխալներ են թույլ տալիս՝ Past Indefinite-ի փոխարեն հաճախ գործածելով կա՛մ Perfekt, կա՛մ Plusquamperfekt: Օրինակ՝ զուգահեռ անցկացնելով գերմաներենի *Vorgestern hatten sie den Text übersetzt* նախադասության հետ, *They translated the text the day before yesterday* նախադասության փոխարեն ուսանողները սովորաբար կազմում են **They had translated the text the day before yesterday* սխալ նախադասությունը: Գերմաներենի *Ich habe dieses Buch gestern gelesen*-ի ազդեցության տակ I read this book yesterday-ի փոխարեն ուսանողները հաճախ գործածում են **I have read this book yesterday*:

Գերմաներենի բացասական ներթափանցման մի այլ օրինակ է ժամանակների համաձայնեցումը, որը ստորադասական նախադասության ստորոգյալի որոշակի կախվածությունն է գլխավոր նախադասության ստորոգյալից:

Անգլերենում, եթե գլխավոր նախադասության ստորոգյալը դրված է անցյալ ժամանակում, ապա խնդիր երկրորդական նախադասության ստորոգյալը նույնպես դրվում է համապատասխան անցյալ ժամանակում: Ժամանակների համաձայնեցման կանոնը չի գործում, եթե խնդիր երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտում է ընդհանուր ճշմարտություն:

Գլխավոր նախադասություն	Խնդիր երկրորդական նախադասություն	
PAST INDEFINITE	Past Indefinite	Գործողությունն ընթանում է գլխավոր նախադասության հետ միաժամանակ
	Past Continuou	Գործողությունն ընթանում է գլխավոր նախա- դասության գործողության պահին
	Past Perfect	Գործողությունը նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը
	Future in The Past	Գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասության գործողության

Գերմաներենում, եթե երկրորդական նախադասության գործողությունը նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը, ապա երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է Plusquamperfekt ժամանակաձևով: Եթե երկրորդական նախադասության գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասության գործողությանը, կամ ընթանում է նրա հետ միաժամանակ, ապա երկրորդական նախադասության մեջ գործածվում է կա'ն Präsens կա'ն Futurum I: Ուսանողների կատարած կայուն, տիպական սխալները պատճառը այս գոյություն ունեցող տարբերությունն է: Օրինակ՝ անգլերենի Mr. Brown told me that the meeting would take place the next week նախադասության մեջ ուսանողները կատարում են հետևյալ սխալը՝ *Mr. Brown told me that the meeting *takes place* *bu(will take place)* the next week. քանի որ նրանք զուգահեռ են անցկացնում գերմաներենի Herr Braun sagte, dass die Sitzung in der nächsten Woche stattfindet նախադասության հետ: Մի այլ օրինակ է գերմաներենի Ich sagte, dass ich für Tom ein Geschenk kaufe, wenn ich Zeit habe նախադասությունը, որի բացասական ազդեցության տակ անգլերենի I said I should buy a present for Tom if I had time նախադասության փոխարեն ուսանողներն ասում են *I said I shall buy (buy) a present for Tom when I have time, այսինքն՝ չեն կիրառում ժամանակների համաձայնեցման կանոնը: Ի դեպ, պետք է նշել, որ գերմաներենում անգլերենի "If" շաղկապի համարժեքը գերմաներենում՝ wenn"-ը / եթե/ և " ob"-ն են / թե արդյոք/: "If"- ի փոխարեն ուսանողները հաճախ գործածում են " when": Գերմաներենի "wenn" շաղկապի համարժեքը անգլերենում " when"-ը / երբ/, և "if"-ն / եթե/ են: Անգլերենի " when" հարցական դերանվան համարժեքը գերմաներենում " wann"-ն է: Օրինակ՝ I shall call the doctor if she feels worse. Ich wurde den Arzt holen, wenn sie sich schlechter fühlt.

Քերականական բացասական ներթափանցման պատճառ է հանդիսանում նաև Continuous ժամանակաձևերի բացակայությունը գերմաներենում և հայերենում: Կայուն, տիպական սխալները հատկապես շատ են հանդիպում Present Perfect Continuous ժամանակաձևում, որը հայերենում թարգմանվում է

Ներկա անկատարով, իսկ գերմաներենում՝ Präsens-ով: Օրինակ՝ Թոմն առավոտ-վանից աշխատում է այգում: Tom arbeitet im Garten seit dem Morgen. Անգլերենի Tom has been working in the garden since morning նախադասության մեջ ռուսանոլ-ները Present Perfect Continuous ժամանակաձևի փոխարեն գործածում են Present Indefinite: * Tom works in the garden since morning.

Անգլերեն լեզվում "Accusative with Infinitive" (Complex Object) և "Nominative with Infinitive" (Complex Subject) կառույցներն ավելի հաճախ են գործածվում, քան հայերենում և գերմաներենում, որտեղ այս կառույցները ավելի հաճախ փոխարինվում են խնդիր երկրորդական նախադասությունե-րով: Այս երևույթը նույնպես բացասական ներթափանցման պատճառ է հանդիսանում: Օրինակ՝ ես չեմ կարծում, որ նա կվերադառնա մինչև մյուս երեքշաբթի: Ich denke nicht, dass sie bis zum nächsten Dienstag zurück kommt. I don't expect *her to return* before next Tuesday. Նա ուզում է, որ դու օգնես նրան: Er will, dass du ihm hilfst. He wants *you to help* him. Հայտնի է, որ պատվիրակությունը մեկնել է տուն: The delegation is known to have left for home. Es ist bekannt, dass die Delegation nach Hause gefahren ist. Պարզվեց, որ երիտասարդը հմուտ կենտրո-նական հարձակվող է: Es stellte sich heraus, dass der Junge ein erfahrener zentral Stürmer ist. The young man turned out to be a skillful centre-forward.

Սրանք էին քերականական մակարդակում բացասական ներթափանց-ման այն դեպքերը, որոնք առավել շատ են հանդիպում անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի, դասավանդման գործընթացում: Ռուսանոլների կատա-րած տիպական սխալների հաշվառումը շատ կարևոր է ռուսումնական նյութի մեթոդական կազմակերպման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արահամյան Ս.Գ., ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975:
2. Gordon E. M., A Grammar of Present Day English. M. 1974.
3. Лапуц Б.А., Обучение второму иностранному языку как специальностью. М. 1980.
4. Հարությունյան Ս.Ն., Գերմաներենի քերականության համառոտ ձեռնարկ, Երևան, 1996:
5. Modern Languages Learning, Council for Cultural Co-operation Teaching, Assessment. A Common Education Committee, Strasbourg. European Framework of Reference. 1998.
6. Шахназарова В.С., Федина М.С., Английский для всех. М. 1976.